

ԼԻՑԻԱ = գետին որ յատկապէս լեցուե-
լով կազմուած է, ոչ-բնական գետին:

ԼՈՒԿ ԿԱՄ ԼԻԿ, ԿՐ ԹՈՒԻ ԼՈԿ ԲԱՌԻՆ
ՄԷԿ ձԵՆԸ, ԵՆ ԿՐ ՆՂԱՆՍԿԷ «ՈՒՐԵՄՆ» (donc),
զ. օ. «ԻՆՆ անէի լուկ»:

ԼՍԿԻԼ = զառամիլ ԵՆ ԻՆՔԻ ԻՐԵՆ ԱՅԼ ԵՆ
ՀԿԱՐԻՆԱԼ ՀՈԳ ԽԱՆԻԼ:

ԼԿԱՄԻԼ = «ԼԿԱՄ», ԵՐԱՍԱՆԿ ՊԵՐ. ԲԱ-
ՌԷՆ շԻՆԱԿԷ Ե, ԵՆ ԿՐ ԳՐԻԾԱԾՈՒԻ ԿԱՆԳ ՈՒՆՈՒԼ,
ԳԱԳԱՐԻԼ, ԻՐԵՐԱՆ ԲՈՆՈՒԼ՝ ՆՂԱՆՍԿՈՒԹԵԱՄԻ.
զ. օ ԵՐԻ ՀԻՐԸ ԿՐ ԳԱԳՐԻ ՈՒՄԵԼԵՆ, ԿՐԵՆՆ՝
«ԻՆՆԱՆ. ԼԿԱՄԵԳԱՐ»:

ԼԿԻԼ = ՀԱԼԻԼ, ԿԱԿՂՆԱԼ, ՍԱՌԵԼԷՆ ՎԵՐՉԸ
ՆՈՐԷՆ ԿԱԿՂՆԱԼ:

ԼՐՅՏԻ = ԼԿԻԼ, ԱՆԱՄՈՒԹ:

ԼՐԸՌՏԵՆ ԿԱՄ ԼՐԵՐԱԾ = շատ անա-
մօթ ԵՆ ԲԱԳՈՒԿԷ (աղբիկ, կին ԵՆ ԱՅԼՆ):

ԼՂԸՐՃՈՒԿ = ՉՈՐԸ շատ, անՀամ, ԳԷՇ
ԵՓԱԾ ԱՊՈՐ ԿԱՄ ԿԵՐԱԿՈՐ:

ԼՈՒԿ = ԽՈՄԱԹԷՆ, ՊԱՐՄԻՐ, ԳԷՂԻՆ ԼՈՒԿ:

ԼՈՒՈԶ = ԲԱՐՃԱՐԱԳԱԾ, ԳԻՂՈՒԾ, ԵՐԿՐԵՆ-
ԳԱԾ: ՆԱԳՐԻ ՄԸ ՄԸՂ ՄԻՇԱՄԱՐԸ ԿՐ ԿՈՂԵՆ «ԵՐԿԱՆ
ԼՂՂԸ»: ՈՂ ՎԵՐՉԱԳԻՐ ՄՈՍՆԻԿՐ ԿՐ ԳՄՆՈՒԻ
ՆԱԿԵ ԱՆԿՈՂ, ԿՈԿՈՂ, ԳՈՌՈՂ, ԳՆՈՂՈՂ ԾԾԱՆ-
ՑԵԱՆԵՐՈՒՆ ՄԸՂ:

ԼՈՅՍ ՈՐ ԿՐ ՀՆԵՐԻ ԼՈՅՍ՝ ՄԷԿ ՎԱՆԿ =
(1) ԼՅՍ. ԼՅՍ Է = ԼՅՍԸ ԵԿԵՐ Ե. ԳԻՂԵՐՆ ԱՆ-
ԳԱԾ Է. «ԼՅՍ ԱՆԵԼ» = ԼՈՒՍԱՆՈՐԵԼ. «ԼՅՍ ԱՐԷ»
= ՃՐԱԳԳ ԿՆԻԿԵՆ ԲՈՆԷ ՈՐ ՍԱ ԱՆԳ ԼՈՒՍԱ-
ՆՈՐՈՒԻ. — «ՄԵՂԸ, ԼՅՍԸ ԿՐԵԹԱՅ՝ ԼՅՍ ՆԻ
ՍԱՐ», ԿԱՐԱԿ ԱՆԳ ԾԱԽԸ ԿՐԵՆՆԸ: (2) ԱԾԱ-
ԿԱՆԱՐԱՐ՝ ԿԱՅԾԱՆ, ԳԵՂԵՂԻԿ, «ԼՅՍ ԵՐԵԱՆ ՈՐՎ
ԱՐԻՆԵՑ», (3) ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ, ՉՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ.
«ԱՇԳԸ ԼՅՍ», — (ՊԱՄԱՍԽԱՆ) «ԼՈՍԱՎ ԿԵՑԻ»:
«ԱՇԳՐԸՆԱԼ», ՆՈՐՀԱՆՈՐԵԼ, ԽՆԳԱԿԵԼ. «ԱՂ-
ՐՈՐ ԱՇԳՐԸՆԱԿ», «ԱՇԳՐԸՆԱ ԵՐԹԱՅ», ԱՅ-
ՑԵԼԸ ԽՆԳԱԿԵԼՈՒՆ յԱՅԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:

ԲԱՐԳԵՐՆ ԵՆ «ԼՈՒՍԱՂԵՐ», ԱՅՆ ԱՂԵՐԵՐ
ՈՐ ԻՐԵԵՆ ՈՒՍԱՄԱՂԵՐ ԿՐԵԹԱՆ ԱՇԻՒ ԿԱՐՈՒ-
ԹԻՒՆ ՈՒՆԵՂՈՒՆԵՐԸ, ԵՓԻՄԱՆ ԳԵՄԻՆ ԱՐԵԵԼԵԱՆ
ԵԿԵՐԵՐՆ ՄՈՒ: «ԼՈՒՍԱԳԵՐ» ԵՆ ԻՐԱՐՈՒ ԱՆՈՒՐ
ՈՐ Ս. ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՄԸՂ ՋԱՄԿԻՆ ՄԻԱՍԻՆ ԱՆԿԱԾ
ԵՆ ԼՅՍԸ:

ԼՈՒՍՆԿԱՅ = ԼՈՒՍԻՆ: «ԼՈՒՍՆԿԻՆ ԼՅՍԸ»:

ԼՈՍԵԼ = ՎԵՐԵԼ:

ԼՈՍՈՒՆԻԲ = ՎՂՈՐԻՆԵՐ, ՄԱՆԻՐ ՎՂՐԱՆԵՐ,
ԳՐԵԹԷ ՎՂՂԻՐ ԿԵՆ: ՀԱՅԻՆ (ՀՈՐ) ԼՈՍՈՒՆԵՐ:

ԼՐՏՈՒ = ԽՈՒՆԸ. «ՈՂՐՈՒՆ» Է ԱՆԳ-
ՍԱԿԱԾ ձԵՆ:

ԼՊՈՒՋ = ԼԵՐԿ:

ԼՐՋՈՒՑ = ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆ. «ԼՐՋՈՒՑ
Է ԹԷ ԵՐԱՂ Է»:

ԼՓԸՌՏՈՒԿ = ՀԱՓԱԳԱՆԵ ԵՓԱԾ (ԻԽ-
ԼԱՓ):

ԼՓԸՌՏՆԵԼ = ԱՐԱԳ ԵՆ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԸ
ԿԵՐԱՊՈՎ ԽՈՍԻԼ:

ԼՐԸԻԿ = շատ ԿԱԿՈՂ (ՀԱՅ ԵՆ ԱՅԼՆ):

(ՀԵՐԱՆՆԻԻ):

Մ. Ս. ԳՈՐԻՐԵԼԻՆՈՒՆ



Ի Ր Ա Խ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

ՄԻԽԹԸՐ ԳՈՅԻ ԳՈՏՈՍՑՆԱՆԳԻՐՔԸ ԵՆ ՀՈՍՈՑ
ՀԻՆ ՔՈՂՈՔՆԵՐԱՆՆ ԻՐԵՐՈՒՆՔԸ

ՀԱՍՏՈՒՆԸ ԵՐԸՈՐԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐՈՒՆՈՒՆ Զ

Մ Ս Ս Ն Ե Ր Ր Ո Ր Ք

ԸՂԻՆՆ ԻՐԱՆՆԱՆ:

(ՀԵՐԱՆՆԻԻ):

Գ.

ՍՊԵՐՆԻՆ:

Լ.

ՄԻԱՆԳԱՄՈՅՆ ՍԱՐՐԵՐ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԳԱ-
ՍԱԿԱՐԳ ԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՍԵՐՎՈՒՆԵՐԸ, SERVUS
ԲԱՌԻ ԽԱԿԱՆ ԽՈՄԱՍՈՒՎ: ՍՊՐՈՒՆԵՐԻ ՎՐԱՅ
ԲԱՆԱԿԱՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ Է ԳԱՐՃԱՐԵԼ ՄԻԽ-
ԹԱՐ ԳՈՂԸ ԻՐ ԳԱՄԱՍՍՈՒՄԱԳՐՈՒՄ: ԱՂԸ ՀԱՐՁԻ
ՄԱՍԻՆ ԱՅՍՈՒՂ ԵՐԿԱՐ ԿԱՆԿ ՀԵՆԵ ԱՈՒՆ, ՈՐՈՎ-
ՀԵՍԵԼ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՍՊՐՈՒՆԵՐԻ ԻՐԱՆԱՐԱ-
ՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՐԵՐԵԱԼ ՄՈՐՈՐ ՈՐՈՇՈՒՄ
ՆԵՐԸ ԳՐԵԹԷ ԱՆՓՈԽՈՒՆ ԻՐԱՅՐԵԼ Է ՄՈՎՍԻՍԱ.
ԿԱՆ ՕՐԵՆԵՐԵՐԻՑ:

ՀԱՅ ԲԱՆԱՍԵՐԻՆԵՐԻ ՄԸՂ ԵՐԱԾՆՆ ԽՐԵԱԿԵ-
ԱՆԸ ԷՐ ԿԱՐԵԼԸ, ԹԷ ԻՐԻ ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԿՈՒԼՏՈՒ-
ՐԱԿԱՆ ԿԱՄԱՌՈՒԹԵԱՆԸ ԱՆՅԱՅԱ Է ԵՂԵԼ ՍՊՐՈՒ-
ԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ, ԱՅԻՆԵՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՀԻ
ՈՒՆԵՑԵԼ ՍՊՐՈՒԼԸ ՈՐԱԿԵՆ ԻՐԱՆԱՆՅ ԱՈՒՐԱԿԱՅ:
ԱՂԸ ԱՆԿԱՆ ԿԱՐԵԼԸ ՀԻ ԳԻՄԱՆՈՒՄ ՈՂ ՄԻ
ՔՆՆԱԳԱՄԱՌՈՒԹԵԱՆ: ԲԱՆԱԿԱՆ Է ՄԻ ՎՈՐԸ ԽՈ-
ՐԱՂՆԻՆ ԿՐՈՒԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԵԼ ՄԸՂ ՀԱՍԱԾ
ՀԱՄ ՈՒ ԿՈՐ ՎԱՄԱԿԱՆ ԱՆԵԿԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ
ՀԱԿԱՐԵԼ ԳԱ ՀԻՆ ԱՐԵԵԼԸՔԻ, ՄԱՆԱԿԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՅԻ ԺՈՂՈՐԵՆԵՐԻ, ԿԱՄԱՌՈՒԹԵԱՆ
ՀՈՄԱՆԻՂ ԵՐԵՆՈՒՅԵՐԻՆ, ՈՐԱԿԵՆ ՉԻ ՀԱՄԱՂՈՒԵԼ,
ԹԷ ՍՊՐՈՒԹԻՒՆ ԱՆԽԱՆԱՓԵԼԸ ԷՐ ՀԱՅԿԱԿԱՆ

կենսեան: Միայն մի բան կարող ենք շեշտել, որ ստրուկների վիճակը հին Հայաստանում քրիստոնեութեան շնորհիւ համեմատաբար մեղմ էր ու տանելի:

Մեր պատմագիրների յիշատակումները եւ մանաւանդ հայ եկեղեցական ժողովների մի քանի որոշումները ճշգրիտ ենթադրել են տալիս, որ յիսուսի ստրուկները (ծառայ) մեծ չափով էին տարածուած պատմական Հայաստանում: Աշտիշատի (352 թ.) ժողովն իր մշակած 7րդ կանոնում խրատում է գլխավորութեամբ վարուել ծառաների (ստրուկների) հետ:

Ըստ երեւութի ստրուկիւնը գոյութիւն ունէր նաեւ Միսիթար Գօշի ժամանակները, թէեւ արգէն կազմաւորման եւ հասել եւ յետընթաց վիճակում էր գտնուում: Այս փաստը դիւրին բացատրելի է, եթէ ի նկատի առնենք, որ ստրկութեան գլխավոր աղբիւրը՝ պատերազմներում կատարուած գերութիւնն էր: Բացարտուենաց շրջանում հայերի քաղաքական գոյութիւնը կուսածաղիկ էր դարձել Բիւզանդիոնի ու արաբների եւ ապ սելջուկների միջեւ, որոնք անշուշտ Հայաստանի քաղաքական ինքնուրոյնութիւնը տարաւ դեպի կորուստ: Այս տեսակ պայմաններում Հայաստանը չէր կարող ինքնուրոյն պատերազմներ վարել, ուրեմն եւ ինքնըստինքեան ցամաքում էր այն աղբիւրը, որով զարգանում էր մեղանում ստրկութիւնը: Իսկ Միսիթար Գօշի շրջանում արգէն միանգամայն մոռնուելու նշաններ էր ցոյց տալիս ստրկութիւնը:

Հայոց Դատաստանագիրքը ստրուկներին՝ զատելով շինականներից, կոչում է ծառայ, որով ցոյց է տալիս յատուկ իրաւական դրութիւն եւ դեպի տէրերն եղած իրաւաբանական յարաբերութիւնների որոշ բովանդակութիւն: Այդ սոսկ ծառայութեան գաղափարով բնորոշում էին նաեւ ստրուկները հին Հրէաստանում եւ ըստ մովսիսական իրաւունքի նրանք կոչուած էին՝ այր մարգրիկ — Ebed, իսկ կանայք — Anah. սրան համախիշ մեր Դատաստանագրքում եւ ընդհանրապէս հայ յիշատակարաններում այր ստրուկները յայտնի են ծառայ, իսկ կանայք — զնիմն անուններով:

Ծառաները, ինչպէս ենթադրելի է Դատաստանագրքի յօդուածներից, տարբերուած էին շինականներից նրանով, որ զուրկ էին հողերից եւ չէին տիրում որեւէ սեփականութեան: Ստրուկների այդ առանձնայատուկ դրութիւնը նկատելի է մի կողմից՝ հին Հայաստանի

նախնի պատմութեան մի քանի կցկուտ փաստերից եւ եկեղեցական ժողովների մի քանի որոշումներից. միւս կողմից՝ բուսական եւ հսկազրկ Միսիթար Գօշի արտայայտած կարծիքները շինականութեան եւ ստրկութեան գոյացմանց ու դրութեանց մասին, որպէս զի պարզ լինի մեր արած ենթադրութիւնների հիմնաւորում: Ստրուկների ու սրանց տէրերի միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները կրում են միանգամայն այլ բնոյթ եւ գծեր, քան շինականութեան մէջ: Գնենք այդ առանձնայատուկ գծերը:

II.

Ստրկութեան, կամ ինչպէս Դատաստանագիրքն է ասում «ծառայութեան», գլխավոր աղբիւրը պատերազմն է: Գերի բռնուած մարդկանց բաժանում են աւար վերցուած իրերի ու ապրանքի հետ միասին զինուորական հրամանատարների միջեւ, նախապէս հանելով $\frac{1}{10}$ յօգուտ թագաւորի եւ $\frac{1}{50}$ յօգուտ եկեղեցուն (II, գլ. Ա., եր. 312): Իսկ եթէ պատերազմին անձամբ մասնակցել է նաեւ թագաւորն, այն ատեն «եւ գերւոյն եւ աւարին կէսն թագաւորի լիցի եւ տասանորդ իցե յեկեղեցին. եւ կիսոյն — զօրացն» (ԱՆԳ): Հետեւապէս եկեղեցիներն ու վանքերն էլ ստանում էին գերիներ, որոնք մտնում էին Հոգեւոր հիմնարկութիւններին պատկանող ստրուկների շարքը: Սակայն մեր Դատաստանագիրքը ճանաչում է ստրկութեան նաեւ այլ աղբիւրներ:

1. Ծնունդ: Ստրկից ծնուելը համարւում էր հիմք, որպէս զի ժառանգները դառնան տիրոջ «ծառաներ». «սպա թէ տէր իւր տացե նմա կին եւ ծնանիցի նմա որդիս եւ դստերս, կինն եւ որդիքն տեառնն նորա եղցին եւ նա միայն ելցե. փրկանօք ելցին եւ նոքա» (II, գլ. Ի):

2. Վաճառք: Վաճառքով ստրկութեան կարելի էր ձեռք բերել զման եղանակով. գաւկնեւր եւ Դատաստանագրքի մի քանի յօդուածներից. «եթէ պատահի քրիստոնէի գնել ծառայ քրիստոնէայ» (II, գլ. ԻԱ). «եթէ գնիցե դ ծառայ այլազգի եւ կամ աղախին...» (II, գլ. ԻԲ): Ըստ երեւութի ծնողները կարող էին իրենց զաւկներին վաճառել ստրկութեան. «իսկ եթէ պատահի ումք վաճառել զղուստր իւր ըստ որում եւ իցե պատճառի յաղախութիւն առնն հաւատացելոյ, մի իրրեւ զաղախին վաճառ վաճառիցե. զի թէ իցե յաւ տեառն իւրոյ հաճոյ որում հատասեցան, փրկեսցե զնա հայր իւր: Բայց յազգ օտար չէ իշխան վաճառել տէր իւր,

զի անարգեանք զնա...» (Անդ)։ Վերջին յօդուածը Միխիթար Գօշը վերցրել է ամբողջովին Մովսիսական օրէնքից՝ էջից ԻԱ, 7 — 11¹։

3. Սարէի յօդաբաժնի ցանկումն էլ Խաւքանչիւր սարուկ կարող էր ինքնակամ հրաժարուել իւր ազատութիւնից եւ ազատուելու իրաւունքից. «Ապա թէ պատասխանի տուեալ ստից ծառայն — սիրեցի զտէր իմ եւ զկին իմ եւ զորդս իմ եւ ոչ գնասցէ յազատուութիւն, տարցի զնա տէր իւր յեկեղեցի Աստուծոյ եւ քահանայիք եւ հաւատարիմ վկայիք եւ գրով առցէ զնա ծառայ յաւտեան» (II, գլ. Ի)²։

Մովսիսական օրէնքին հետեւելով, Միխիթար Գօշը սարկութիւնը ճանաչում է ոչ իւր եւ յաւտեանական հիմնարկութիւն։ Վեց լրել տարիներ անցնելուց յետոյ եօթներորդ տարում իւրաքանչիւր սարուկը ստանում է ազատուելու իրաւունք եւ կարող է հեռանալ իր տիրոջց (II, գլ. Ի), եթէ ամուսնացած է, կինն էլ նրա հետ է ազատուում³։ Բացի այդ ազատութեան օրինական ժամանակամիջոցից, Գատաստանագիրքը անհամարում է, որ սարուկն ամէն մի րոպէ կարող է իրեն ազատ կացուցանել, «յոթում ըստ գնոյ իւր ծառայեցէ» (Անդ), կամ երբ յետ են գնում ծնողները. «Ապա թէ կանխաւ հայր իւր փրկել զնա կարիցէ, փրկիցէ» (II, գլ. ԻԱ)։ Վերջապէս սարուկը կարող է ազատուել նաեւ քրիստոնէութիւն ընդունելու դէպքում. «եթէ գինցէ որ ծառայ այլազգի եւ կամ աղախին, եթէ յանձն առնուն մկրտել» ընդ փրկանք լինցին — գնոյ չափ ծառայեալք ազատք լինցին»։

Սարուկները կարող էին վերջնականօրէն ազատուել, երբ ընդունելու էին հոգեւոր կոչում։ Այս դէպքում անհրաժեշտ էր տիրոջ կանխակալ յօժարութիւն. «Զծառայս ի ժառանգաւորութիւն անել առանց կամաց տերանցն ոչ հրամայեմք ի տրամութիւն ստացողացն, քանզի տանց կործանուի այս գործէ։ Ապա թէ երբեք արժանի երեւեացի ծառայն առ ի ձեռնադրութիւն աստիճանի... եւ թողացուցեն տեարք իւր եւ ազատեցնեն եւ ի տանէն ի բաց անաքեցնեն, եղցին» (II, գլ. ԺԷ)։ Սարուկում Միխիթար Գօշը վերցրել է ամբողջովին Կլեմի առաքելական կոչուած ՀՁ կանոնից։

¹ Համմ.՝ Saalschütz, եր. 709-710։

² Համմ.՝ Միխիթ. օրէնքի էջից ԻԱ 1-6, Բ. օրին. ԺԵ. 12-16։

³ Համմ.՝ Միխիթ. օրէնք անդ.։

Ինչպէս որ Մովսիսական իրաւունքը տարբերում է հաւատացեալ սարուկներին անհաւատներէից, նմանապէս Գատաստանագիրքը քրիստոնեայ սարուկներին բաժանում է ոչ-քրիստոնեաներից։ Բնական է, որ քրիստոնեայ սարուկների վիճակը համեմատաբար ոչ-քրիստոնեաների հետ ամէն կողմից, որպէս եւ ազատուելու տեսակետից, աւելի բարեյաջող էր։ Վերջիշեալ բոլոր որոշումները սարուկների ազատման նկատմամբ վերաբերում էին քրիստոնեայ սարուկներին։ Ոչ-քրիստոնեաների նկատմամբ Գատաստանագիրքը ասում է, որ եթէ հեթանոս «ծառան» կամ «աղախինը» չկամեն ան մկրտուելու, տէրն այն ատեն իրաւունք ունի նրանց ի վաճառ հանելու (II, գլ. ԻԲ)։

III.

Սարուկների իրաւական դրութեան մասին վերջիշեալ բոլոր որոշումները, որոնք վերցուած են բացառապէս մովսիսական օրէնքներից, պարզ ցոյց են տալիս, որ սարուկների վիճակը կախուած էր ամբողջովին տիրոջ անձնական կամքից ու նկատմանից։ Վերջապէս նաեւ սարկութեան ծագման ձեւերը, որոնց հետ վերը ծանօթացանք, մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ այդ տեսակ օղակ-իրաւական պայմաններում խօսք անգամ չի կարող լինել սարուկների անշարժ ստացուածքի սեփականատիրական իրաւունքների մասին։

Այնուամենայնիւ սարուկների գրութիւնը համեմատաբար հին յուսկան եւ հռովմէական իրաւունքների հետ մովսիսական օրէնքների համաձայն աւելի մարդասիրական էին։ Նոյնն ենք գտնում հայ Գատաստանագրքում, ուր սարուկների անձի պաշտպանումն տէրերի կամայականութիւնների եւ բռնութիւնների դէմ հիմնուած է դարձեալ մովսիսական օրէնքների որոշումների վրայ։

Ազատների վերաբերմամբ գոյութիւն ունեցող «արեան գնի» եւ վրէժխնդրութեան սկզբունքը հայ իրաւունքը կիրառում է նաեւ սարուկների նկատմամբ։ Ցիտով հասցրած հարուածներից ու ծնծից սարուկների մահուան դէպքերում «Գատաստանագրքի վրէժխնդրութիւն լինի ի տէրանց... եւ եթէ այլազգիք իցին եւ եթէ քրիստոնեայք, ըստ այնմ գինք արեանն սուգանիցին»։ Բայց երբ մեռնողը հարուածներից յետոյ ապրել է տակաւին մի քանի օր, այն ժամանակ չպիտի լինի վրէժխնդրութիւն, «գի

գինք արծաթոյ իւրոյ են¹», Դատաստանագիրքն այս դէպքում նշանակում է իբրեւ պատիժ նաեւ ապաշխարութիւն: Մի այլ տեղ Դատաստանագիրքը, հիմնուելով մովսիսական օրէնքի վրայ², սահմանում է հետեւեալ որոշումները այն դէպքերում, երբ տէրերը շնասուում եւ հաշմ են դարձնում ստրկի մարմին ու զգայաւորանք որեւէ մասը, երբ շնասուած ստրուկը քրիստոնեայ է, նա այլեւս ազատուում է ստրկութիւնից: «Իսկ եթէ յայլազգեաց իցէ ծառայն եւ աղախինն, վաճառիցէ որքան արժան է՝ պակաս եւ կամ ընդ կէս գնոյ ըստ որում ի դէպ իցէ զտեստանին իրաւունքը. սակայն իշխան լիցի թէ եւ ոչ կամ վաճառել» (II, գլ. 1): Վերջապէս երբ ստրուկը փախչում է տիրոջ օտարի մօտ, վերջինս իրաւունք չունի յետ վերագործին նրան նախկին տիրոջ, այլ պարտաւոր է փախած եւ իւր մօտ ապաստանած «ծառային», պահել իւր տանը, իբրեւ սեփական ստրկին, եւ ապա 6 տարուց յետոյ ազատութիւն տալ նրան (II, գլ. 2): Աւաղին հայեացքից այս ստրուկնակ սկզբունքը փախած ստրուկների մասին բացատրելի կը լինի, եթէ մտաբերենք, թէ ինչ նշանակութիւն ունէր հին ժողովրդների, նմանապէս հին հայերի իրաւունքների մէջ տիրապետող, նաեւ միջնադարեան Եւրոպայում երբեք ծաղկող սպասարէլ իրաւունքը — Asylrecht³:

Ազատութիւն ձեռք բերելով, ստրուկները՝ պիտի ենթագրել, մտնում էին շինականների շարքը եւ ստանում էին իրենց անտեսութեան համար որոշ հողաբաժիններ: Ուրեմն ազատուած ստրուկները վերջիվերջոյ մտնում էին դարձեալ նոր յարաբերութիւնների մէջ իրենց տէրերի հետ, թէեւ ի հարկէ նախկին ստրուկներին տրուել էր լիակատար ազատութիւն ընտրելու իւր համար նոր բնակատեղ կամ անտեսական գործունէութիւն: Սակայն ի նկատի առնելով հին եւ միջնադարեան Հայաստանում տիրող հողային յարաբերութիւններն եւ արդիւնաբերութեան նուազ զարգացումը, բնականօրէն այն անձինք, որոնք նոր էին ազատուել ստրկութիւնից եւ զուրկ էին միանգամայն նիւթական միջոցներից, ուրիշ ելք չպիտի գտնէին իրենց կենսական գոյութեան համար, եթէ ոչ,

դիմել գիւղատնտեսական աշխատանքին: Նրանք պիտի ստանային որեւէ հողաբաժին եւ սրա հետ միասին պիտի մտնէին այն հողատիրական յարաբերութիւնների եւ կախումների մէջ, որոնցով ընդունում էր շինականութիւնը:

Այս ենթագրութիւնը հիմնում ենք հռոմէական կրեւոյթների վրայ, որոնք տեղի ունէին հին դասական աշխարհի ստրկութեան պատմութեան մէջ: Այդ ստրկութեան շարքերից առաջ եկան հին հռոմէական coloni, որոնք որոշ նմանութիւն ունին հին Հայոց շինականների հետ: Երկրագործութեան ու գիւղատնտեսութեան կազմալուծման եւ անկման շրջանում հին հռոմէական կայսրութեան մէջ բազմամէջ հարուստ հողատէրեր իրենց ստրուկներին տեղաւորում եւ ապրեցնում էին իրենց սեփական հողերի վրայ, տալով նրանց մանր կապալաւորների իրաւունքներ: Այս եղանակով հին հռոմէական ստրուկները իրականօրէն ազատուում էին իրենց տէրերի անմիջական իշխանութիւնից եւ տիրապետութիւնից, բայց եւ միւս կողմից նրանք այնուհետեւ որոշ պարտաւորութիւններ էին ստանձնում, արդէն իբրեւ հողագործներ ու գեղջուկներ, դէպ իրենց տէրը, որպէս հողի միակ սեփականատիրոջ վերաբերմամբ⁴:

(Եւրոպայի)

Խ. ՄԱՄՈՆԷԼԻԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐԻՑԻ ԹԷ ԳՐԻԳՈՐԻՑԻ

Յ. Մարկուարտի գեղեցիկ հատուածը՝ «Հայ Բդեշխը», (Թարգմ. Հ. Թ. Աւետիկեան. Վիեննա, 1903) ծնունդ տուաւ հետագայ տղերքուն:

Ագաթանգեղեայ քով (տպ. Վենետ. 1862, էջ 597) կը յիշատակուի անգամ մը իբրեւ հայկական նահանգ «Գաբիւրացոյ», աշխարհը, որ տեղւոյն անյարմարութեան պատճառաւ գրաւած էր արդէն բանասիրաց ուշադրութիւնը (հմտ. Հիւրքման Հին Հայոց տեղւոյ անուններ. 113): Մարկուարտ յիշեալ գրութեան մէջ (էջ 13, տն. 2) կը գրէ. «Գաբիւրացոյ կ'երեւայ թէ յունական բնագրին մէկ

¹ Մովսիսական օրէնք. Եւր. ԻՍ. 20-21:

² Մովսիս. օրէնք. Եւր. ԻՍ. 26-27:

³ Ապաստանի իրաւունքի մասին աւելի մանրամասն տես մեր ուսումնաս. «Արեւան վեժ եւ փրկանք»՝ Ազգագրակ. Հանդէս, 1903 թ. գիրք XI, էր. 278-280:

⁴ Felix, Entstehung des Eigenthums, IV. B. 1. Hälfte, S. 441.